ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՍԴԲՀԿ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՎԱՀԱԳՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ քաղաքական կուսակցությունների շարքում յուրահատուկ տեղ է զբաղեցնում Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը, որի ձևավորման պատմությանը և անդրադարձել ենք սույն հոդվածում:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության գաղափարական ձևավորման գործում կարևոր դեր է կատարել նախկին հնչակյան գործիչ Երվանդ Պալյանի կողմից Ժնևում 1900 թ. օգոստոսից հրատարակված «Հանդես» ամսագիրը[1], որի շուրջը և համախմբվել են եվրոպական տարբեր համալսարանների՝ հիմնականում դաշնակցական ուսանողներ: Որոշ ժամանակ անց նրանք կազմել են «Հանդեսի» խումբը: «Հանդեսի» խումբը՝ Ե. Պալյանի և Ղազար Տեր-Ղազարյանի գլխավորությամբ, հրատարակել է «Հանդես» ամսագրի հինգ համար (300 էջ) և Հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագիրը (32 էջ)[2]: Չնայած ծրագիրը կազմելուն և հրատարակած բրոշյուրների վրա Հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անվանումը դնելուն՝ «Հանդեսի» խումբը մինչև 1903 թ. սեպտեմբերի վերջը որևէ կազմակերպական նոր ձև չի ընդունել և այդ անվանումներն օգտագործել է ընդամենը նշելու համար իր դավանանքն ու ուղղությունը[3]:

Հիմնականում այս խմբի ընկալած մարքսիզմը, նրա մշակած ու քարոզած սկզբունքներն են որդեգրել ՍԴԲՀԿ ապագա հիմնադիրները: Քանի որ «Հանդեսի» և Հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի օրինակներ չեն պահպանվել, նրանց հայացքների մասին որոշակի տեղեկություններ ենք քաղում 1903 թ. սկզբներին Ե. Պալյանի հրատարակած «Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը» բրոշյուրից, որտեղ հեղինակը ոչ Միայն քննադատում է Կովկասում 1902 թ. ամռանը Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի, Ա. Երզնկյանի և ուրիշների կողմից ստեղծված Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը, որը հրատարակվել էր նրանց «Պրոլետարիատ» թերթում 1902 թ. հոկտեմբերին[4], այլև դրան զուգահեռ ներկայացնում է իր խմբի հայացքներն այս կամ այն հարցի շուրջ: «Հանդեսի» խմբի նպատակն է եղել սոցիալիստական գրականության հայերեն թարգմանությունը և հայկական սոցիալիս-

---

[1] *Ե. Պ ա լ յ ա ն. Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը, Ռուսչուք, 1903, էջ 2:*

[2] *Նույն տեղում:*

[3] *«Բանվոր» (Ժնև), 1904, թիվ 1-2, հունվար-փետրվար, էջ 1:*

[4] *Տե՛ս «Պրոլետարիատ» (Թիֆլիս), 1902, թիվ 1, հոկտեմբեր, էջ 1-4:*

տական կուսակցության ստեղծումը ինչպես Կովկասում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, Բուլղարիայում, Եգիպտոսում և Ամերիկայում[5]: Վերջին հանգամանքը հետագայում կարևոր

Դեր է խաղացել 1903 թ. սեպտեմբերի 27-ին Ժնևում ստեղծված Հայ սոցիալ-դեմոկրատիա[6] կազմակերպության կարճատև կյանքի և ՍԴԲՀԿ կողմից Ե. Պալյանի մերժվելու ու քաղաքական ասպարեզից հեռացվելու գործում:

Ե. Պալյանի նպատակը եղել է իր գլխավորությամբ համահայկական բանվորական սոցիալ-դեմոկրատական համադաշնության ստեղծումը, որի մեջ պետք է մտնեին, ինչպես արդեն ասվեց, Կովկասի, Արևմտյան Հայաստանի, Եգիպտոսի, Բուլղարիայի, Ամերիկայի հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություններ, որոնցից յուրաքանչյուրը միաժամանակ ֆեդերատիվ սկզբունքով պետք է մտներ համապատասխան երկրի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Այս առումով պատահական չէր Պալյանի հանդիմանությունը՝ ուղղված Հայ սոցիալ-դեմոկրատների միությանը՝ կապված նրանց ընտրած անվան հետ: Նա նշում էր, որ եթե այդ կազմակերպությունը ճանաչում է միայն կովկասյան բանվորական շարժումը, ինչու՞ է իրեն կոչում Հայ սոցիալ-դեմոկրատների միություն և ոչ թե Կովկասյան հայ սոցիալ-դեմոկրատների միություն[7] և առավել ևս պատահական չէր մեկ տարի հետո (1903 թ. սեպտեմբերին) Ե. Պալյանի խմբի կողմից ստեղծած «Հայ սոցիալ-դեմոկրատիա» կազմակերպության անվան ընտրությունը: Ինչ վերաբերում է կոնկրետ երկրի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպական կառուցվածքին, ապա, ըստ նրա, օրինակ, Կովկասի դեռևս գոյություն չունեցող յուրաքանչյուր ազգային կազմակերպություն պետք է ունենար գյուղական, արվարձանային, քաղաքային, շրջանային կոմիտեներ, Կենտրոնական խորհուրդ, Վերաքննիչ մարմին, Ընդհանուր ժողով, որոնք զբաղվելու էին տեղական հարցերով, իսկ բոլոր ազգությունների ներկայացուցիչների կողմից ընտրված Ընդհանուր կենտրոնական խորհուրդը վարելու էր կուսակցության ընդհանուր և խոշոր գործերը[8]: Միաժամանակ այս հանգամանքը չպետք է խանգարեր, որ համայն Ռուսաստանի բոլոր ազգությունների պրոլետարիատը դասակարգային համերաշխությամբ կազմեր միայն մի կուսակցություն, քանի որ այդ էր, ըստ նրա, իրականության պահանջը և սոցիալիզմի սկզբունքներից մեկը[9]: Եթե առանձին պետության սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպական կառույցի սկզբունքը նրանք վերցրել էին ավստրիական մարքսիստներից, ապա համահայկական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների համադաշնության (կոնֆեդե-

---

[5] *Ե. Պ ա լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 2:*

[6] *Այս կապակցությամբ դժվար է համաձայնել ակադեմիկոս Հ. Սիմոնյանի այն տեսակետին, թե Հայ սոցիալ-դեմոկրատիա կազմակերպությունն առաջացել է ավելի վաղ (տե՛ս Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Ազատագրական պայքարի ուղիներում, գ. 2, Երևան, 2003, էջ 24), քանի որ Ե. Պալյանը «Բանվոր» թերթում ուղղակի նշում է, որ «Հայ սոցիալ-դեմոկրատիան» ստեղծվել է 1903 թ. սեպտեմբերի 27-ին (տե՛ս «Բանվոր», Ժնև, 1904, թիվ 1-2, էջ 1):*

[7] *Ե. Պ ա լ յ ա ն. նշվ. աշխ, էջ 12-13:*

[8] *Նույն տեղում, էջ 17:*

[9] *Նույն տեղում, 15:*

բացիա) գաղափարը նոր երևույթ էր , քանի որ, ինչպես հայտնի է, անգամ հայերի նման աշխարհասփյուռ հրեաները Ռուսական կայսրությունում իրենց սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ստեղծելիս որոշ տարածքային սահմանափակում էին դնում՝ Ռուսաստանի, Լիտվայի և Լեհաստանի համընդհանուր հրեական բանվորական միություն: Բացի այդ, արդարացի չէ խորհրդային պատմագրության մեջ հաճախ տեղ գտած այն մեղադրանքը, թե սպեցիֆիկները (բոլշևիկները ՍԴԲՀԿ-ին և նրա գործիչներին այդպես են անվանել) կուրորեն նմանակել են Բունդին (Ռուսաստանի, Լիտվայի, Լեհաստանի համընդհանուր հրեական բանվորական միություն), որովհետև ՍԴԲՀԿ-ն իր ազգային ֆեդերատիվ կազմակերպական սկզբունքը ժառանգել էր «Հանդեսի» խմբից, իսկ վերջինս, ինչպես արդեն ասվեց, այն ոչ միայն վերցրել էր ավստրիական մարքսիստներից, այլև որոշակի նոր երանգ էր հաղորդել դրան:

«Հանդեսի» խումբը ի տարբերություն Հայ սոցիալ-դեմոկրատների միության (ՀՍԴՄ) մասնակի սոցիալական, քաղաքական ռեֆորմների, պառլամենտական պայքարի նկատմամբ մերժողական դիրքի[10], սոցիալ-դեմոկրատական կուսակցության նպատակն էր համարում հարատև և սիստեմատիկ տնտեսական, քաղաքական շարունակական վերափոխումներով սոցիալիստական հասարակության նախադրյալների ստեղծումը, որը, ըստ նրանց, իրենից, անկասկած, սոցիալիստական հեղափոխություն էր ներկայացնում, քանի որ այդ ռեֆորմները իրականացվելու էին բուրժուազիայի ընդդիմությունը հաղթահարելու միջոցով: Եվ նրանք իրենց այս դիրքորոշումը հիմնավորում էին հենվելով ոչ թե Լենինի և բոլշևիկյան մամուլի, այլ II ինտերնացիոնալի Ցյուրիխի՝ 1893 թ., Լոնդոնի 1896 թ. կոնգրեսների որոշումների, ինչպես նաև Կ. Կաուցկու, Է. Բեռնշտայնի և այլոց աշխատությունների վրա[11]:

Կովկասի վերաբերյալ Պալյանը նշում էր, որ Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորները դասակարգային համերաշխությամբ պետք է կազմեն միայն մեկ կուսակցություն[12], սակայն Կովկասի յուրաքանչյուր ազգի բանվոր դասակարգ պետք է ունենար առանձին կազմակերպություն[13], և պետք է տարբերվեր մյուսներից լեզվային, կազմակերպչական ինքնուրույնությամբ և յուրահատուկ այլ պահանջներով: Ըստ նրա՝ մեկ միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն կարող է կազմվել միայն այն դեպքում, երբ ազգությունները կստեղծեն ինքնուրույն և գիտակից միություններ և կքարոզեն ու կգործեն միասնաբար[14]: «Հանդեսի» խումբը մերժում էր նաև ապագա Ռուսաստանի ֆեդերատիվ կառուցվածքը՝ կարծելով, որ դա ո՛չ հնարավոր է, ո՛չ էլ անհրաժեշտ: Հնարավոր չէր, որովհետև մի կողմից ռուսական միապետությունը բիրտ ուժի միջոցով երբեք թույլ չի տա դրա ստեղծումը, մյուս կողմից էլ ազգությունները չեն կարողանա համաձայնության գալ իրենց մյուս դասակարգերի հետ: Իսկ դաշնության անհրաժեշտությունը մերժվում էր, քանզի այն «ոչ մի մազաչափ չէր կարող ա-

[10] *Նույն տեղում, էջ 11:*
[11] *Նույն տեղում, էջ 12:*
[12] *Նույն տեղում, էջ 15:*
[13] *Նույն տեղում, էջ 17:*
[14] *Նույն տեղում, էջ 19-20:*

ռաջ մղել պրոլետարիատի պատմական միսիան»[15]: Հարկ է նշել, որ նորաստեղծ ՍԴԲՀԿ իր հիմնադիր մանիֆեստում որպես Ռուսաստանի ապագա պետական կառուցվածքի ձև ընդունել է ռամկավար դաշնային հանրապետությունը, սակայն շուտով հրաժարվել է դրանից, քանի որ, ինչպես Դ. Անանունն է նշում, «ՍԴԲՀԿ հիմնադիրները մտավախ հանդիսացան ֆեդերացիայի պահանջի խնդրում… (սակայն) հրաժարվելով քաղաքական ֆեդերալիզմից ամուր ապավինեցին կազմակերպական ֆեդերալիզմին»[16]: Առաջ անցնելով՝ նշենք, որ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո նրանք նորից հակվում են ֆեդերատիվ սկզբունքին:

Ինչ վերաբերում է կուլտուր-ազգային ինքնավարության սկզբունքին, որը հետագայում որդեգրեցին սպեցիֆիկները, ապա այն «Հանդեսի» խմբի մոտ հստակ ձևակերպված չէ, այլ դրսևորվում է հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ինքնավարության և ընդհանուր պրոլետարական պահանջների (մամուլի, խոսքի, ժողովների և այլն) իրականացման հետ, որովհետև այդ պահանջների կատարմամբ վերանալու էր նաև լեզվի, դպրոցների նկատմամբ խտրականությունը[17]:

Այսպիսով, վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ սպեցիֆիկների մի շարք մոտեցումների ընտրության հարցում էական է եղել «Հանդեսի» խմբի գաղափարական ազդեցությունը, իսկ թե ինչպես են նրանց տեսակետները տարածվել Անդրկովկասում և, մասնավորապես, Բաքվում ու ինչպես է այնտեղ ձևավորվել Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը, մենք կարող ենք պատկերացում կազմել՝ ծանոթանալով տեղի դաշնակցական կազմակերպությունների գործունեության և ներկուսակցական մթնոլորտի հետ:

Դաշնակցական և հետագայում Դաշնակցությունից հեռացած մի քանի հայտնի գործիչներ իրենց հուշերում նշում են, որ 1899–1902 թվականներին Դաշնակցության ներսում խոսակցություններ են եղել կուսակցության կովկասյան գործունեության անհրաժեշտության մասին[18]: Օրինակ՝ Արամայիսը (Միսաք Տեր-Դանիելյանը) Դ. Անանունի մասին գրած իր հուշերում նշում է, որ 1899 թ., Անանունի դաշնակցական եղած ժամանակ, երբ իրենք աշխատելիս են եղել Բաքվի նավթարդյունաբերական տարբեր ընկերությունների գրասենյակներում, միասին գաղտնի հրատարակել են «Բանվոր» անունով ձեռագիր երկշաբաթաթերթի մի քանի համար[19], իսկ Արսեն Ամիրյանը (Մրավյան) գրել է, որ 1901 թ. մի քանի ընդդիմադիր դաշնակցականներ Բաքվում հրատարակել են մի թռուցիկ, որտեղ շեշտված է եղել «կովկասյան գործունեության անհրաժեշտությունը»[20]:

Դաշնակցության մեջ այս միտման առաջացումը պայմանավորված էր մի կողմից նրանով, որ դաշնակցական մի շարք երիտասարդներ բավարարված

---

[15] *Նույն տեղում, էջ 26-27:*

[16] *Դ. Ա ն ա ն ո ւ ն. Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 96-97:*

[17] *Ե. Պ ա լ յ ա ն. նշվ. աշխ, էջ 27-28:*

[18] *Տե՛ս «Հայրենիք» (Բոսթոն), 1925, թիվ 4(28), էջ 106, 1939, թիվ 1 (205), 69 «Վեմ» (Փարիզ), 1933, Ա., սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 102:*

[19] *Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 150, ց. 1, գ. 25, էջ 59:*

[20] *«Վեմ», 1933, Ա., սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 102:*

չէին Արևմտահայ դատի համար տարվող աշխատանքներով[21], իսկ մյուս կողմից՝ նրանց վրա ազդում էր «ընկերվարական վարդապետության Անդրկովկաս մուտք գործելը և բանվորական կենտրոններում նվաճումներ անելը»[22]:

Եվ տրամաբանական է, որ հայերեն սոցիալիստական գրականություն ձեռք բերելու համար նրանք դիմած լինեին «Հանդեսի» խմբի իրենց եղբայրներին, համերկրացիներին ու կուսակիցներին: Ինչ վերաբերում է ՍԴԲՀԿ ապագա հիմնադիրներին, ապա նրանք մարքսիզմով հետաքրքրվելու համար ունեցել են նաև այլ դրդապատճառ: Բանն այն է, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին մի շարք պայմանների բերումով հայ երեխաների զգալի մասը հաճախում էր ռուսական պետական դպրոցներ, և այս հանգամանքը նպաստում էր նրանց գիտակցության ապահայկականացմանը, ռուսականացմանը. այդպիսով՝ հայ երեխաները, փաստորեն, կտրվում էին հայ կյանքից և վերածվում էին ռուսական մտածելակերպով քաղաքացիների: Այդ վտանգի դեմն առնելու, նրանց հայկական միջավայրի հետ կապելու, հայության խնդիրներին ծանոթացնելու համար ՀՅԴ Բաքվի կազմակերպությունը սկսում է բացատրական աշխատանքներ տանել աշակերտների հետ: Աբրահամ Գյուլխանդանյանը այդ կապակցությամբ իր հուշերում գրել է, որ աշակերտությունը հետաքրքրվել է ՀՅԴ և Հնչակի միջև առկա տարբերություններով, բայց նրանց ավելի զբաղեցրել են սոցիալ-դեմոկրատները, մինչդեռ իրենք այդ ուղղությամբ հարմար գրականություն չեն ունեցել[23]:

Այսպիսով, ՀՅԴ Բաքվի կազմակերպությունն աշակերտների հետ տարվող աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար 1902 թ. վերջին – 1903 թ. սկզբին որոշում է հրավիրել Բաքվի դպրոցների աշակերտական համագումար, որին հրավիրում է նաև տեղի բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին, որոնք ևս պետք է պարզաբանեին իրենց կուսակցական տեսակետները: Հետաքրքիր է, որ ՀՅԴ կողմից այդ ժողովներին մշտապես մասնակցել են Հ. Շահրիկյանը, Ն. Տեր-Ղազարյանը, Ալ. Ծատուրյանը (Ռուբենի) և Աբ. Գյուլխանդանյանը[24]: Ահա վերը նշվածից պարզվում է՝ աշակերտների հետ տարվող աշխատանքներին ակտիվորեն մասնակցող ապագա ՍԴԲՀԿ հիմնադիրներից Ն. Տեր-Ղազարյանը և Ալ. Ռուբենին աշակերտների հետաքրքրությունը բավարարելու, աշակերտական համագումարներում այլ կուսակցությունների ներկայացուցիչների հետ բանակռիվներում պատշաճ ներկայանալու և Դաշնակցության շահերը պաշտպանելու համար մարքսիստական գրականության կարիք են ունեցել: Ճիշտ է, հրապարակի վրա եղել է մարքսիստական որոշ ռուսերեն գրականություն, սակայն զուտ ռուսական ուղղվածություն ունեցող այդ գրականությունը, ըստ երևույթին, չի բավարարել նրանց պահանջմունքները, և նրանք դիմել են «Հանդեսի» խմբին, մանավանդ որ Ղ. Տեր-Ղազարյանը և Ն. Տեր-Ղազարյանը եղբայրներ էին, ու բացի այդ՝ նրանք բոլորն էլ շուշեցիներ կամ Շուշիի դպրոցի սաներ ու դաշնակցականներ էին: Մենք ուղղակի փաստեր չունենք, որոնցով հնարավոր լիներ ապացուցելու մարքսիստական գրականության մատակա-

[21] *«Հայրենիք», 1925, թիվ 4 (28), փետրվար, էջ 106:*
[22] *«Հայրենիք», 1939, թիվ 1 (205), նոյեմբեր, էջ 67:*
[23] *«Հայրենիք», 1924, թիվ 8, հունիս, էջ 115:*
[24] *Նույն տեղում:*

բարման հարցը: Սակայն այն հանգամանքը, որ հետագայում նրանց հայացքները գլխավորապես համընկել են, և նրանք միավորվել են ՍԴԲՀԿ մեջ, վկայում է այն մասին, որ այդպիսի կապ եղել է: Ուշագրավ է նաև այն, որ Ն. Տեր-Ղազարյանը և Ալ. Ռուբենին, շատ սիրված լինելով դաշնակցական երիտասարդների ու աշակերտների կողմից, հետո էլ (ՍԴԲՀԿ ժամանակ) պահպանել են այդ ազդեցությունը[25]:

Այսպիսով, ինչպես Դաշնակցության Բաքվի կազմակերպության մեջ տիրող ընդհանուր մթնոլորտը, այնպես էլ առանձին երիտասարդ դաշնակցականների գործունեության ուղղությունը նպաստել են, որ նրանք ուսումնասիրեն մարքսիզմը, հետաքրքրվեն սոցիալ-դեմոկրատական շարժմամբ: Արդյունքում որոշ ժամանակ անց ստեղծվել է մի իրավիճակ, երբ նրանք այնքան են կլանվել մարքսիզմով, որ դարձել են մարքսիստական աշխարհայացքով դաշնակցականներ, և անհրաժեշտ էին որոշ ազդակներ, նպաստավոր պայմաններ, որպեսզի նրանք հեռանային Դաշնակցությունից և նվիրվեին սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական սկզբունքներով կազմակերպելու հայ բանվորությանը և նրա քաղաքական պայքարը ղեկավարելու գործին:

Այդպիսի ներքին ու արտաքին պայմաններ ստեղծվում են 1903 թ.: Այս առումով ներքին ազդակի դեր կատարեցին Դաշնակցության ներսում տեղի ունեցած իրադարձությունները. մասնավորապես, 1903 թ. սկզբից Ժնևում «Հանդեսի» շուրջ համախմբված դաշնակցական երիտասարդների ու տեղի ՀՅԴ ղեկավարության միջև տարաձայնություններն ակնհայտ սուր բնույթ են ստանում, և առաջինները այդ մասին մասնավոր նամակներով հայտնում են տարբեր անձանց: Սկզբում Կովկասում դրան բավականին հանգիստ են վերաբերվում՝ կարծելով, որ Քիրստափոր Միքայելյանը, որը պետք է մեկներ Ժնև, կհարթի այդ «թյուրիմացությունները», սակայն վերջինս չի կարողանում դարձի բերել չափից դուրս ապազգայնացած երիտասարդներին, գործին չի օգնում նաև Աբ. Գյուլխանդանյանի և Ն. Տեր-Ղազարյանի երկարաշունչ նամակը՝ ուղղված Ղ. Տեր-Ղազարյանին[26]: Արդյունքում՝ 1903 թ. սեպտեմբերի 27-ին Ժնևում կայացած նիստում նրանք Ե. Պալյանի հետ ստեղծում են «Հայ սոցիալ-դեմոկրատիա» խումբը[27], որը, սակայն, երկար կյանք չի ունենում:

Հայ կազմակերպության առաջացմանը նպաստած ներքին մյուս ազդակը Դաշնակցության կողմից կովկասյան և հատկապես բանվորական շարժումներին մասնակցելու առաջարկի մերժումն էր:

---

[25] *«Վեմ», 1933, Ա., սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 103, «Զայն» (Թիֆլիս), 1906, թիվ 6, նոյեմբերի 5, էջ 92, Ս. Կ ա ս յ ա ն. Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 40-42:*

[26] *«Հայրենիք», 1925, թիվ 4 (28), փետրվար, էջ 110:*

[27] *«Բանվոր», 1904, հունվար-փետրվար, թիվ 1–2, էջ 1:*

1903 թ., ըստ երևույթին գարնանը[28], Բաքվում տեղի է ունենում ՀՅԴ կովկասյան մարմինների Ռայոնական ժողով, որին մասնակցում են ներկայացուցիչներ Թիֆլիսից, Շուշիից, Ալեքսանդրապոլից, Կարսից, Ռուսաստանի ուսանողությունից, ինչպես նաև Բաքվից: Վերջինիս ներկայացնում էին Հ. Շահրիկյանը, Ն. Տեր-Ղազարյանը, Աբ. Գյուլխանդանյանը և այլք: Ժողովում Ն. Տեր-Ղազարյանը և Աբ. Գյուլխանդանյանը որպես քննարկման նյութ են առաջարկում «ՀՅԴ դիրքը բանվորական շրջաններում տեղի ունեցող գործադուլների ժամանակ» թեման, ինչը տաք վիճաբանությունների տեղիք է տալիս: Հատկապես խիստ է արտահայտվում բժիշկ Մանուելյանը՝ հայտարարելով, որ Կովկասյան գործերով, մանավանդ բանվորական խնդրով զբաղվելը ՀՅԴ գործը չէ, որ դրա համար գոյություն ունի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն: Ըստ նրա՝ «ՀՅԴ աշխատանքը Տաճկահայաստանում ազգային տենչանքները իրականացնելն է»[29]:

Հետևանքը լինում է այն, որ ընդունվում է հետևյալ որոշումը. «ՀՅԴ ժողովը ընդունելով, որ բանվորական շարժումը կենսունակ և խոշոր երևույթ է, բայց գտնում է, որ ՀՅԴ չի կրնա ակտիվ մասնակցություն ունենալ, համակրելով հանդերձ, քանի ազգային դատը ավելի տագնապալի է, և մեր ուժերը երկու գործի համար անբավարար»[30]: Ըստ Վ. Մինախորյանի՝ 1903 թ. մտավորականների մի խմբի կողմից ՀՅԴ-ին առաջարկվեց մասնակցել Ռուսաստանի ազատագրական կռվին, բայց մերժվելով՝ այդ խումբն անջատվեց և 1903 թ. հոկտեմբերին հիմնեց Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը[31]:

Խմբի անջատման և ՍԴԲՀԿ ստեղծման համար արտաքին խթանի դեր են կատարել՝ առաջին՝ 1903 թ. և հատկապես ամռանը բանվորական շարժումների աննախադեպ ակտիվացումը, երկրորդ՝ երիտասարդ դաշնակցականների՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների հետ բանավեճերում մրցունակ լինելու մեծ ձգտումը (այդ շրջանում բոլոր սոցիալ-դեմոկրատները տառապում էին իրենց առավել ուղղափառ մարքսիստ ներկայացնելու մոլուցքով: Եվ այս պայմաններում հեշտ չէր արդեն ձևավորված դաշնակցական-մարքսիստ երիտասարդների համար մնալ ազգայնական, բուրժուական որակվող Դաշնակցության մեջ)[32]:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ ՍԴԲՀԿ ստեղծման «հրեական վարկածին»՝ որպես արտաքին ազդակի: Խորհրդային պատմագրության և նրանց հարող հրապարակախոսության մեջ տարածում է գտել այն տեսակետը,

---

[28] *Ըստ Հ. Տասնապետյանի՝ այդ ժողովը տեղի է ունեցել 1903 թ. հունիսի 12-ից որոշ ժամանակ առաջ [տե՛ս Հ. Տասնապետյան. ՀՅԴ կազմութենեն մինչև Ժ Ընդ. ժողովը (1890-1924), Աթենք, 1988, էջ 64], իսկ Աբ. Գյուլխանդանյանը նշում է, որ ժողովը տեղի է ունեցել 1903 թ. 2-րդ կեսին, սակայն նա, բացի բանվորական շարժումներին մասնակցելու հարցից, ուրիշ հարց չի հիշում, որ քննարկված լիներ [տե՛ս «Հայրենիք», 1925, № 4 (28), էջ 107]: Այս հանգամանքը կասկած է հարուցում, քանի որ դժվար թե հունիսի 12-ի օրենքից հետո գումարվեր ՀՅԴ Կովկասյան մարմինների Ռայոնական ժողով և եկեղեցական գույքի բռնագրավման հարցը առաջնային պլանում չլիներ ու նրա մեջ չտպավորվեր:*

[29] *«Հայրենիք», 1925, թիվ 4(28), էջ 17:*

[30] *Հ. Տասնապետյան. նշվ. աշխ., էջ 64:*

[31] *Վ. Մինախորյան. Անջատականներ.– «Վեմ», 1933, էջ 103:*

[32] *Այս մասին տե՛ս «Հայրենիք», 1922, թիվ 1, էջ 56, 1925, թիվ 4 (28), էջ 110:*

թե ՍԴԲՀԿ-ն արհեստականորեն ստեղծվել է Բունդի կողմից ՌՍԴԲԿ 2-րդ համագումարից հետո և ի հակադրություն նրա՝ Կովկասում իր սկզբունքներն արմատավորելու նպատակով: Այս վարկածը առաջ քաշելու համար հիմք է ծառայել բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինի՝ 1905 թ. սեպտեմբերի 5-ին ՌՍԴԲԿ - կենտկոմին ուղարկված նամակում սպեցիֆիկների մասին արտահայտած այն կարծիքը, թե «դա բունդական կրեատուրա (դրածո – Վ. Հ.) է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար»[33]: Տրամաբանական է, որ խորհրդային շրջանի ոչ մի պատմաբան չի համարձակվել շրջանցել կամ գոնե քննել այդ գնահատականը: Առկա գրեթե բոլոր ուսումնասիրություններում, որտեղ քիչ թե շատ անդրադարձ կա սպեցիֆիկների մասին, Լենինի խոսքերը կամ բառացի մեջբերված են, կամ զարգացված: Սակայն միայն խորհրդային պատմագրությունը չէ, որ անդրադարձել է այս հարցին: 1950-ական թվականների 2-րդ կեսին, երբ Սփյուռքում քննարկման առարկա է եղել Հնչակյան կուսակցության 70-ամյակի կապակցությամբ գրվելիք նրա պատմության ուղղվածության հարցը, ոմն Ս. Լորելլը ռամկավարների օրգան «Արև» թերթում հանդես է եկել «Պատմագիտական դիտողություններ Հնչակյան պատմագրության առթիվ» վերտառությամբ հոդվածով՝ ուղղված Ա. Կիտուրի դեմ, որտեղ ինչ-ինչ հարցերին զուգահեռ, ՍԴԲՀԿ մասին նշել է հետևյալը. «Հայկական Բունդը» կամ «Սպեցիֆիկներ»-ի անդամները պոկվել են Դաշնակցության բոկոցից 1905 թ.: Նրանց կենտրոնական ամսաթերթ «Սոցիալիստը» 1905 թ. Ժնևում հրեական բունդի կնքահայրությամբ է ծնված: Սպեցիֆիկների կազմակերպությունը արհեստականորեն ստեղծել էին հրեական Բունդի կենտրոնի ղեկավարները Ժնևում՝ Ա. Կրամերը և Վ. Մեդեմը, որոնց նյութական միջոցներով և գաղափարական փշրանքներով էլ կերակրվում էին «Սոցիալիստը», «Նոր կյանքը»: Նրանք (Կրամերը և Մեդեմը – Վ. Հ.) այդպիսով վրեժ էին լուծում համառուսական ՍԴԲԿ-ից, որը մերժել էր ճանաչել հրեական Բունդը»[34]: Մենք չկարողացանք պարզել հեղինակի ով լինելը և օգտագործած սկզբնաղբյուրները, սակայն մեզ համար ակնհայտ է խորհրդային իշխանությունների առաջ հոդվածագրի հաճոյանալու ու այդ ճանապարհին մի շարք փաստեր աղավաղելու, սխալ ներկայացնելու միտումը: Իրականությունն այն է, որ թե՛ ՍԴԲՀԿ, թե՛ նրա օրգան «Սոցիալիստը» հիմնվել են ո՛չ 1905 թ. և ո՛չ էլ Ժնևում, այլ Բաքվում. կազմակերպությունը՝ 1903 թ. հոկտեմբերին, «Սոցիալիստը»՝ 1904 թ. մայիսի սկզբին: Այս փաստական սխալները, տեղեկատվության սկզբնաղբյուրներ չնշելը, հոդվածագրի սպեցիֆիկներին վիրավորելու, ստորացնելու ակնհայտ միտումը, մեզ հիմք են տալիս չվստահել հոդվածագրին և չօգտագործել այդ տեղեկատվությունը:

Ամբողջացնելով Բունդի կողմից ՍԴԲՀԿ ստեղծման և ֆինանսավորման գոյություն ունեցող վարկածի մասին տեղեկատվությունը, որի միակ աղբյուրը, ըստ երևույթին, Վ. Լենինի գնահատականն է՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

---

[33] *Վ. Ի. Լ ե ն ի ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 47, Երևան, 1983, էջ 79-80:*

[34] *Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 6/16, թ. 2:*

ա) անկասկած Բունդը միակ կուսակցությունն է եղել, որի հետ ՍԴԲՀԿ-ն ունեցել է բավականին ջերմ հարաբերություններ, և նրանք միշտ աջակցել են իրար:

բ) Չնայած ուղղակի փաստեր չկան, բայց չի բացառվում, որ Բունդը կարող էր իր բարոյական, քաղաքական ազդեցությամբ արտաքին ազդակի դեր կատարել ՍԴԲՀԿ ստեղծման գործում, քանի որ փոքր-ինչ տարօրինակ է, որ 1903 թ. գարնանը սպեցիֆիկները, մերժվելով ՀՅԴ կողմից, աշնան կեսերին նոր են հեռանում Դաշնակցությունից ու բացի այդ՝ հետաքրքիր է, որ ՍԴԲՀԿ-ն ստեղծվել է ՌՍԴԲԿ 2-րդ համագումարից որոշ ժամանակ հետո, երբ համագումարում Բունդի առաջարկած կուսակցության ազգային կազմակերպական կառուցվածքը մերժվել է և այդ հարցում, որպես հակադիր փաստարկ, օգտագործվել է գլխավորապես ՌՍԴԲԿ Կովկասյան միության կազմակերպական կառուցվածքը: Այստեղ, սակայն, չի բացառվում նաև սպեցիֆիկների՝ Դաշնակցությունից անջատվելու վրա ազդված լիներ հենց ՌՍԴԲԿ ստեղծման փաստը[35]:

գ) Թե՛ ՍԴԲՀԿ-ից պահպանված ֆինանսական բնույթի որոշ փաստաթղթերում[36], թե՛ այլ նյութերում որևէ հիշատակություն չկա սպեցիֆիկների՝ Բունդից ֆինանսական որևէ օգնություն ստանալու մասին, սակայն ընդհանրապես չի կարելի ժխտել նման օգնություն ստանալու հնարավորությունը: Բայց դա կարող էր լինել շատ ավելի ուշ շրջանում, քանի որ վկայություններ կան հայ կազմակերպության գոյության վաղ շրջանում սպեցիֆիկների նյութական ծանր պայմանների մասին: Օրինակ՝ Ն. Տեր-Ղազարյանը այդ շրջանի մասին գրում է. «Գրականության կարիքը մեծ էր, միայն բերանացի պրոպագանդան ու ագիտացիան չէր կարող բավարարություն տալ, սակայն մատաղ կազմակերպությունը միջոցներ չուներ անհրաժեշտ ծախսերի համար: Այդ պատճառով բոլոր ընկերները, որոնք ծառայում էին, իրենց ստացածի մի մասը հանում էին գործն առաջ տանելու: Տպագրվում են մի շարք թռուցիկներ, լեգալ բրոշյուրներ, իսկ 1904 թ. մայիսի 1-ին լույս է տեսնում կազմակերպության օրգան «Սոցիալիստի» առաջին համարը»[37]: Դ. Անանունը Ալ. Ռուբենու մասին իր հոդվածում նշում է. «ՍԴԲՀԿ - թույլ լինելով նյութապես չէր կարող ապահովել Ալ. Ռուբենու ապրուստի միջոցները և նրան դարձնել ըստ արհեստի մարքսիզմի քարոզիչ: Իր հանապազօրյա հացը վաստակելու համար նա ստիպված եղավ 2 տարի դառնալ «Մուրճ» ամսագրի սրբագրիչ, ապա ուսուցչության պաշտոն ստանձնել Բաքվում»[38]: Այնուամենայնիվ, եթե անգամ սպեցիֆիկները Բունդից երբևէ նյութական օգնություն ստացած լինեին, ապա դրանում ոչ մի պարսավելի բան չկա, քանի որ երկուսն էլ Ռուսաստանի քաղաքական կազմակերպություններ էին և հետապնդում էին միևնույն նպատակները, ինչը չի կարելի ասել բոլշևիկների մասին, երբ նրանք իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար չխորշեցին նյութական

---

[35] *Ճիշտ է ՌՍԴԲԿ հիմնվել է 1898 թ. մարտին, սակայն, ըստ էության, կուսակցության ստեղծումը իր երկու թևերով կարելի է համարել 1903 թ.:*

[36] *ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 10:*

[37] *«Ձայն», 1906, թիվ 4, հոկտեմբերի 22, էջ 56:*

[38] *«Հայաստանի Կոոպերացիա» (Երևան), 1920, թիվ 14, հուլիսի 31, էջ 571:*

միջոցներ ստանալ Ռուսաստանի թշնամի Գերմանիայից՝ հստակ իմանալով, որ վերջինիս նպատակն ամենևին Ռուսաստանին օգնելը չէր:

դ) Եվ, վերջապես, անընդունելի պետք է համարել խորհրդային պատմագրության մեջ քաղաքական նկատառումներով առաջ քաշված այն տեսակետը, թե ՍԴԲՀԿ արհեստականորեն Բունդի կողմից ներդրվել է Կովկասի քաղաքական դաշտում[39]: Մինչդեռ ներկայացված տվյալները և փաստարկները ցույց են տալիս, որ Հայ կազմակերպությունը ի հայտ է եկել օրինաչափ զարգացող գործընթացների արդյունքում:

Այսպիսով, վերը ներկայացված ներքին և արտաքին պայմանների համընկնման արդյունքում 1903 թ. հոկտեմբերին Բաքվում հիմնականում Դաշնակցությունից հեռացած երիտասարդ մտավորականների մի խումբ հրատարակում է իր մանիֆեստը և դրանով իսկ ազդարարում «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» ստեղծումը[40]:

ՍԴԲՀԿ մանիֆեստում, որի գլխավոր հեղինակը, հավանաբար, Ալ. Ռուբենին է եղել, ասված էր. «Կազմակերպել հայ բանվորներին Կովկասում, ճանաչել նրանց կարիքները, տալ նրանց… այդ կարիքներին համապատասխան պահանջներ և ցույց տալ այն ուղին, որը հայ պրոլետարիատը պիտի անցնի, որպեսզի կարողանա իրագործել իր այդ պահանջները… լսելի անել հայ բանվոր դասակարգի կարիքները հարևան ժողովուրդների պրոլետարական կազմակերպություններին և … ամբողջ Ռուսաստանի կազմակերպված պրոլետարիատի գործունեության շրջանակի մեջ մտցնել պահանջներ, որոնք կենսական են հայ պրոլետարիատի համար… կազմակերպվելով և ճանաչելով ինքն իրեն, այսինքն՝ իր կարիքները ու պահանջները և հարելով միջազգային այս մեծ բանակին՝ հայ պրոլետարիատն էլ կդառնա … պրոլետարական բազմանդամ ընտանիքի հարազատ մի զավակը»[41]: Բացառությամբ երկու հարցի, ՍԴԲՀԿ մանիֆեստը հիմնականում պահպանել է «Հանդեսի» խմբի գաղափարական ժառանգությունը: Դրանցից առաջինը նշումն է առ այն, որ կազմակերպության գործունեության դաշտը Կովկասն է, այսինքն՝ նրանք հրաժարվում են ողջ աշխարհի հայ պրոլետարիատին կազմակերպելու և նրա պայքարը ղեկավարելու պալյանական գաղափարից, և երկրորդը՝ Հայ կազմակերպությունը ապագա Ռուսաստանը տեսնում է բաժանված շրջանների և կանտոնների, իսկ Անդրկովկասը՝ որպես ինքնավար կանտոն[42]: Սա ևս հակասում էր «Հանդեսի» խմբի առաջարկած Ռուսաստանի ունիտար պետական կառուցվածքի սկզբունքին, սակայն, հետագայում իրենց ծրագրում սպեցիֆիկները այս սկզբունքից հրաժարվում են՝ այն համարելով ՌՍԴԲԿ հետ միավորվելու ճանապարհին լուրջ խոչընդոտ[43]:

---

[39] *Վ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման Մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 488, 506, Ծ. Ա ղ ա յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 231, Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գ. 1, Երևան, 1967, էջ 362 և այլն:*

[40] *Դ. Ա ն ա ն ո ւ ն. նշվ. աշխ., էջ 93:*

[41] *ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 44, էջ 3–4:*

[42] *Նույն տեղում, էջ 4:*

[43] *Դ. Ա ն ա ն ո ւ ն. նշվ. աշխ., էջ 95–97:*

Հայ կազմակերպության ստեղծման տեղի և ժամանակի (տարի, ամիս) վերաբերյալ հայ պատմագրության մեջ արտահայտված կարծիքները հիմնականում ընդունելի են[44], սակայն կան նաև այնպիսիք, որոնք չեն համապատասխանում իրականությանը[45]: Բանն այն է, որ այդ հեղինակները շփոթել են «Հայ սոցիալ-դեմոկրատիա» խմբի ստեղծումը (Ժնև, 1903 թ., սեպտեմբեր) ՍԴԲՀԿ ստեղծման փաստի հետ (Բաքու, 1903 թ., հոկտեմբեր): Ճիշտ է, ՀՍԴ խումբը երկար կյանք չի ունեցել և կարճ ժամանակ անց նրա գրեթե բոլոր անդամները ընդգրկվել են ՍԴԲՀԿ կազմում, սակայն դա չի նշանակում, որ Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունն առաջացել է Ժնևում 1903 թ. սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիսներին: Առավել ևս անընդունելի են այն տեսակետները, թե Հայ կազմակերպությունը ստեղծվել է 1904 կամ 1905 թվականներին[46]:

ՍԴԲՀԿ հիմնադիրները և որոշ ժամանակ անց նրանց միացած անդամներն էին Ալ. Ծատուրյանը, Ն. և Ղ. Տեր-Ղազարյանները, բժ. Տ. Իսախանյանը, Մ. Բաղդասարյանը, Ռ. Բաղդասարյանը, քիմիկոս Հովհ. Յուզբաշյանը, Բ. Իշխանյանը, Հ. և Ա. Հովհաննիսյանները, Գ. Պիճիկյանը, Գ. Կոզիկյանը (Եսալեմը), Ե. Պալյա-Նը (Վ.Վահունին), Դ. Անանունը (1905 թ-ից): Ըստ հնչակյան գործիչ Ռուբեն Խան-Ազատի հուշերի՝ նրանց միացել է նաև Հնչակյան կուսակցությունից հեռացած մի փոքր խումբ[47]:

Ինչ վերաբերում է «Հանդեսի» գաղափարախոս, ՀՍԴ ղեկավար Ե. Պալյանին, որը սկզբում, ըստ երևույթին, կարևոր դեր էր կատարել ՍԴԲՀԿ հիմնադրման գործում, ապա նա շուտով մեկուսացվել է կազմակերպությունից: 1904 թ. սկզբին Ժնևում Գ. Կոզիկյանի (նա ևս շուտով հեռանում է Պալյանից) հետ ձեռնարկել է ՀՍԴ օրգան «Բանվոր» անունով հանդեսի հրատարակությունը, որից, սակայն, լույս է տեսել երկու համար: Նույն տարվա ամռանն ու աշնանը, լինելով Բաթու-

---

[44] *Ս. Կ ա ս յ ա ն. Սպեցիֆիկները և Սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 15, Վ. Ա վ ե տ ի ս յ ա ն. նվշ. աշխ., էջ 488, Ա. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. Փորձ հայկական մարքսականության նախաճյուղ «Սպեցիֆիզմ»-ի պատմության.– «Դրոշակ», ԺԷ տարի, 1986, թիվ 2, մայիսի 14, էջ 99, Ա. Հ ա կ ո բ յ ա ն. «Սպեցիֆիկներ» (1903-1918 թթ.).– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների». 1997, № 2, էջ 35, Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Ազատագրական պայքարի ուղիներում, գ. 2, Երևան, 2003, էջ 245, նաև հուշեր՝ Աշ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Երկու բնութագիր, էջ 22, Վ. Մ ի ն ա խ ո ր յ ա ն. Անջատականներ.– «Վեմ», 1933, Ա., սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 103, ՀԱԱ, Հ. Օ հ ա ն յ ա ն. ՍԴԲՀԿ (անտիպ հոդված) էջ 2 և այլն:*

[45] *Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գ. 1, էջ 358, գ. 2, Երևան, 1975, էջ 556, Հ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ մղած պայքարի պատմությունից, Երևան, 1962, էջ 7, ն ո ւ յ ն ի՝ Հայ բուրժուազգայնական կուսակցությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905–1907 թթ.), Երևան, 1975, էջ 160, Ա. Հ ա մ բ ա ր յ ա ն. Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին, Երևան, 1990, էջ 248, Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 364, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 27, Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996, էջ 417:*

[46] Программы политических партий в России. М., 1917, с. 22 (*այստեղ, թերևս, օգտվել են Դ. Անանունի թույլ տված սխալից. տե՛ս* А н а н у н. Армянский вопрос в России.– В кн.: Сборник армянской литературы, под. ред. М. Горького. Пг., 1916, с. 37), *Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 6/16, թ. 2:*

[47] *Ռ. Խ ա ն - Ա զ ա տ. Հայ հեղափոխականի հուշերից.– «Հայրենիք», 1929, № 6, էջ 109):*

մում, Ախալցխայում, Բաքվում և ընդհարվելով ՍԴԲՀԿ միջուկի հետ, Ե. Պալյանը վերջնականապես հեռանում է կազմակերպությունից[48]: Նրա հեռացման պատճառների մասին, թերևս, միայն գրել է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը, որի կարծիքով Ե. Պալյանը կազմակերպությունից հեռացվել է, քանի որ պնդել է, թե «Նոր կազմակերպությունը պետք է լիովին ընդունի միջազգայնականության (ինտերնացիոնալիզմի) սկզբունքը և բացառապես առաջնորդվի գիտական սոցիալիզմի՝ մարքսիզմի ուսմունքով»[49]՝ ի հակադրություն մյուսների այն կարծիքի, որ այդ ուսմունքը պետք է հարմարեցվի հայկական կյանքի իրավիճակին[50]: Մեր կարծիքով, Ե. Պալյանի մեկուսացման, ապա հեռացման գլխավոր պատճառը նրա՝ ղեկավարի, ուղղորդողի դեր ստանձնելու ցանկությունն էր, ինչը չի ընդունվել ՍԴԲՀԿ կողմից: Բանն այն է, որ Ե. Պալյանը թե՛ «Հայ սոցիալ-դեմոկրատական միությունը» և իր «Պրոլետարիատ» օրգանը բրոշյուրում և թե՛ «Բանվոր»-ի երկու համարներում անփոփոխ զարգացրել է տարբեր երկրների հայկական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կոնֆեդերացիա ստեղծելու գաղափարը, որը պետք է ղեկավարվեր իր հիմնած «Հայ սոցիալ-դեմոկրատիա» կազմակերպության (Ժնև) կողմից, և այս առումով ՍԴԲՀԿ հիմնումը նա ընկալում էր որպես իր ծրագրի իրականացման առաջին քայլ: Բայց նրա հաշվարկները չեն արդարանում, քանի որ Հայ կազմակերպության ղեկավար կորիզը ամենևին էլ չի կիսում Ժնևից ուղղորդվելու Պալյանի ցանկությունը: Բացի այդ՝ նրանք իրենց գործունեության գլխավոր դաշտը համարում էին Կովկասը՝ միաժամանակ չբացառելով այլ երկրների հայ սոցիալ-դեմոկրատների հետ ջերմ հարաբերությունների հաստատումը, ինչը և արեցին հետագա տարիներին: Այս տեսակետի օգտին է խոսում նաև Ֆիլիպեի խմբի 1904 թ. մայիսի 2 (15)-ին Եվրոպայի հայ սոցիալ-դեմոկրատական կոմիտեին ուղարկված նամակում նշված այն տեսակետը, թե Ե. Պալյանը հեռացել է «էգոիզմի և իշխելու ձգտումներ» արտահայտելու համար[51]: Այսպիսով, ՍԴԲՀԿ ղեկավարությունը, մեկուսացնելով Պալյանին, իր կողմն է քաշում ՀՍԴ մյուս անդամներին, որոնք շուտով հանդես են գալիս ՍԴԲՀԿ մեջ մտնելու պաշտոնական հայտարարությամբ: Այնուհետև Ժնևյան այդ խումբը Հայ կազմակերպության որոշմամբ վերածվում է Հայ կազմակերպության արտասահմանյան կոմիտեի[52]: Իսկ Ե. Պալյանը Գ. Կոզիկյանի - հետ փորձելով շարունակել ՀՍԴ-ի կյանքը, ինչպես արդեն ասվեց, Ժնևում 1904 թ. սկզբին հրատարակում է «Բանվոր» հանդեսը, բայց հաջողության չհասնելով՝ հեռանում է քաղաքական ասպարեզից:

Վերը նշված փաստական տվյալները ի մի բերելով՝ կարելի է եզրակացնել, որ ՍԴԲՀԿ ձևավորման գործընթացը սկսվել է 1900 թվականին, երբ Ժնևում Ե. Պալյանը սկսել է հրատարակել «Հանդես» սոցիալիստական ուղղվածության ամսագիրը և հիմնականում դաշնակցական երիտասարդների հետ կազմել է մի խումբ: «Հանդեսի» խմբի հրատարակությունները, նրանց ընկալած մարքսիզմը

---

[48] *Հ ԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 11, մաս I, թ. 90:*
[49] *Հ. Ս ի մ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 245:*
[50] *Նույն տեղում:*
[51] *ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 5, էջ 1:*
[52] *Հ. Ս ի մ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 245:*

առանցքային դեր են կատարել ՍԴԲՀԿ ապագա հիմնադիրների գաղափարական ձևավորման գործում: Այս առումով պատահական չէ, որ Հայ կազմակերպության ծրագիրը, կանոնադրությունը, կազմակերպչական կառուցվածքի սկզբունքները վերցված են Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից: Այսինքն՝ նրանք մարքսիզմին, սոցիալ-դեմոկրատիային ծանոթացել են հենց դրանց ծննդավայրում՝ Արևմտյան Եվրոպայում՝ ի տարբերություն հայ բոլշևիկների, որոնք գլխավորապես ազդվել էին Ռուսաստանի մարքսիստներից, սոցիալ- դեմոկրատիայից:

Հետագայում ՍԴԲՀԿ-ն հիմնադրած երիտասարդ դաշնակցականների մարքսիզմով, սոցիալ-դեմոկրատական շարժմամբ հետաքրքրվելու համար հիմք են ծառայել արևմտահայության ազատագրական շարժումների անհաջող ընթացքը, Անդրկովկասում և մասնավորապես Բաքվում XX դարի սկզբին նկատվող բանվորական շարժումների ակտիվացումը, ՀՅ Դաշնակցության մերժողական դիրքը այդ շարժումներին մասնակցելու հարցում, ինչպես նաև որպես դաշնակցականներ նրանց մասնավոր գործունեությունը, հատկապես Բաքվի հայ աշակերտների հետ տարվող աշխատանքները: Հիմնականում վերը նշված պայմանների համադրության, համընկնման արդյունքում է 1903 թ. հոկտեմբերին Բաքվում հիմնադրվում Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը, որի ծննդականը նրա ընդունած մանիֆեստն էր: Դրանում նորաստեղծ կազմակերպությունը իր գլխավոր խնդիրն էր համարում Կովկասի հայ բանվորության կազմակերպումը, նրա տնտեսական ու քաղաքական պայքարի վարումը:

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ АРМЯНСКОЙ СОЦИАЛ- ДЕМОКРАТИЧЕСКОЙ РАБОЧЕЙ ОРГАНИЗАЦИИ (АСДРО)

ВААГН АКОПЯН

Р е з ю м е

Среди армянских политических партий особое место занимает Армянская социал-демократическая рабочая организация (АСДРО). АСДРО, созданная в октябре 1903 г. в Баку, была марксистской социал-демократической рабочей организацией. Идеологически и организационно в ее образовании значительную роль играл Ерванд Палян, на формирование взглядов которого имела большое влияние европейская социал-демократия, в особенности германская и австрийская, и это обстоятельство в дальнейшем играло определяющую роль во взаимоотношениях РСДРП и АСДРО.

FROM THE HISTORY OF FORMATION OF ARMENIAN SOCIAL-DEMOCRATIC LABOUR ORGANIZATION (ASDLO)

VAHAGN HAKOBYAN

S u m m a r y

Among the Armenian political parties Armenian social-democratic labour organization (ASDLO) takes special place. ASDLO was a Marxist, social-democratic, labour organization, founded in October 1903, in Baku. In ideological and organizational formation of that organization Yervand Palyan had significant role. His views were formed under the influence of European social-democracy, in particular German and Austrian, and this circumstance later on played the main role in relations between RSDLP and ASDLO.